ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտի 2020 թվականի N 105

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5), աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետի (ծածկագիր 2.3-17), աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-18), աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահի (ծածկագիր 2.3-15) և աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-8) համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2020 թվականի մարտի 31-ին անցկացվող մրցույթների՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 30
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2020 թվականի մարտի 30-ի թիվ 105 որոշման

ԿԱԶՄ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	անունը, ազգանունը	հաստատությունը (մարմինը)	պաշտոնը
1	Վարդան Սահակյան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ	Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ
2	Նորայր Յարմալոյան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան
3	Արթուր Մխիթարյան	ՀՀ Լոռու մարզպետարան	Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար
4	Դավիթ Ստեփանյան	ՀՀ Լոռու մարզպետարան	Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
5	Համլետ Պողոսյան	Տեղական ինքնակառավարման մարմին	Սպիտակ համայնքի ավագանու անդամ
6	Լուսիկ Սարդարյան	«Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Տնօրեն

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

30/03/2020 11:05:45 A
Առաջատար պաշտոններ 31.03.2020թ. (ծածկագիր՝ խմբ-2_200331_1100)

Հանձնաժողովի կազմը

ՎԱՐԴԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՆՈՐԱՅՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ԻՐԱՎԱԲԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԴԱՎԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՄԼԵՏ ՄՈՒԽԱԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԼՈՒՍԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ
Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ
Պաշտոնը՝ «ՍՊԻՏԱԿԻ ԱՆ. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՏՆՕՐԵՆ
Այլ տվյալներ՝ ՔԻՄԻԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտի 2020թ. № 106

ԹԱՄԱՐԱ ՌԱՖԻԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին կետով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 61-Ա որոշումը, 2020 թվականի մարտի 16-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով վաճառելու մասին» թիվ 2/1-2 արձանագրությունը, հաշվի առնելով, որ 06-006-0501-0094 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,01456 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի ցանկի մեջ՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 111 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0501-0094 կադաստրային ծածկագրով 0,01456 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը 123 000 (հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամով, հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, օտարել աճուրդում հաղթող ճանաչված Թամարա Ռաֆիկի Հովակիմյանին (ծնված 14.06.1955թ.):

2. Թամարա Ռաֆիկի Հովակիմյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3.Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում, աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտի 2020թ. № 104

«ՍՈՒՍԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿՈԼՈՄԲՈՍԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին կետով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 26-ի թիվ 30-Ա որոշումը, 2020 թվականի մարտի 16-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով վաճառելու մասին» թիվ 2/1-1 արձանագրությունը, հաշվի առնելով, որ 06-006-0137-0037 կադաստրային ծածկագրով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 2,11651 հեկտար մակերեսով էներգետիկայի օբյեկտների գործառնական նշանակության հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի ցանկի մեջ՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Երևանյան խճուղի, թիվ 83 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0137-0037 կադաստրային ծածկագրով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 2,11651 հեկտար մակերեսով էներգետիկայի օբյեկտների գործառնական նշանակության հողամասը 11 175 120 (տասնմեկ միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար հարուր քսան) ՀՀ դրամով, ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով, օտարել աճուրդում հաղթող ճանաչված «Սուսաննա Պետրոսյան Կոլոմբոսի» անհատ ձեռնարկատիրոջը (պետական հաշվառման համար 69.1120136, ՀՎՀՀ 66999659):

2. «Սուսաննա Պետրոսյան Կոլոմբոսի» անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում, աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 30
ք.Սպիտակ